Սմարթֆոնների խաղարկության անցկացման և կազմակերպման կանոններ

1. Խաղարկության նկարագրություն

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ «Կազմակերպիչ») իրականացնում է խաղարկություն, որի շրջանակում կխաղարկվեն հետևյալ սմարթֆոնները՝ 1 «iPhone 6S» 32 ԳԲ, 1 «Honor 10 Lite» 32 ԳԲ և 1 «Samsung Galaxy A10»: Խաղարկությունն իրականացվում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցով:

2. Խաղարկության Կազմակերպչի անվանումը և իրավաբանական հասցեն

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ, Արգիշտի փ., 4/1 շ., 0015 Երևան, Հայաստանի Հանրապետություն:

3. Խաղարկության մասնակիցներ

Խաղարկությանը կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական անձ (բացառությամբ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի և «ՄոբիԴրամ» ՓԲԸ-ի աշխատակիցների): Իրավաբանական անձինք խաղարկությանը չեն կարող մասնակցել:

4. Խաղարկության անցկացման կարգը

4.1. Խաղարկությանը մասնակցելու համար 2019թ-ի մայիսի 6-ից մինչև հունիսի 6-ը (ներառյալ) մասնակիցը «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի սպասարկման կենտրոններից՝ կանխիկ կամ ապառիկ եղանակով պետք է ձեռք բերի ցանկացած աքսեսուար: Գործարքը կատարելու պահին մասնակիցը պետք է Կազմակերպչին հայտնի իր կոնտակտային հեռախոսահամարը՝ հաղթելու դեպքում կապ հաստատելու համար: Գործարքը կատարելուց հետո մասնակիցը պետք է պահպանի ՀԴՄ կտրոնը և վճարման անդորրագիրը:

4.2. Սույն կանոնների 1-ին կետում նշված սմարթֆոնների խաղարկությունը տեղի է ունենալու առցանց («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ ֆեյսբուքյան պաշտոնական էջում)՝ 2019թ.-ի հունիսի 24-ին՝ ժամը 15:00-ին, որի ժամանակ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից մշակված ծրագրային ապահովման միջոցով պատահականության սկզբունքով կընտրվեն և կհրապարակվեն շահող մասնակիցների կողմից աքսեսուարների ձեռքբերման ժամանակ վերջիններիս տրված վճարման անդորրագրերի մեջ նշված աքսեսուարների սերիական համարները:

4.3 Խաղարկության ընթացքին և արդյունքի հրապարակմանը հնարավոր է հետևել առցանց («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ ֆեյսբուքյան պաշտոնական էջում): Համապատասխան հոդվածը կհրապարակվի Կազմակերպչի www.mts.am պաշտոնական կայքում խաղարկությունից 1 շաբաթ առաջ:

4.4. Ցանկացած շահող մասնակից 2019թ.-ի հունիսի 25-ից մինչև հուլիսի 5-ը (ներառյալ) պետք է ներկայանա «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակ՝ շահումը ստանալու համար: Շահող մասնակիցը պետք է ներկայացնի անձը հաստատող

փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ), ինչպես նաև համապատասխան ՀԴՄ կտրոնն ու վճարման անդորրագիրը:

4.5. Սույն կանոնների 4.4. կետում սահմանված ժամկետում շահող մասնակիցների կողմից «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակ չներկայանալու կամ վերջիններիս կողմից նույն կետով նախատեսված փաստաթղթերը, ՀԴՄ կտրոնը կամ վճարման անդորրագիրը չներկայացնելու դեպքում խաղարկության արդյունքը կճանաչվի չեղյալ, ինչի մասին տեղեկությունը կհրապարակվի Կազմակերպչի www.mts.am պաշտոնական կայքում 2019 թ-ի հուլիսի 8-ին:

4.6. Սույն կանոնների 4.5. կետում նշված դեպքերում խաղարկության արդյունքը չեղյալ ճանաչվելու պարագայում կկայանա նոր խաղարկություն, որին կրկին կմասնակցեն սույն կանոնների 4.1. կետով սահմանված կարգով աքսեսուարները ձեռք բերած անձինք: Այդ դեպքում նոր խաղարկության անցկացման կարգի վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի Կազմակերպչի www.mts.am պաշտոնական կայքում մինչև 2019թ.-ի հուլիսի 15-ը:

4.7. Խաղարկության դադարեցման դեպքում Կազմակերպիչը պարտավոր է www.mts.am պաշտոնական կայքում հրապարակել տեղեկատվություն Խաղարկության դադարեցման վերաբերյալ կամ այլ եղանակով հրապարակայնորեն ծանուցել մասնակիցներին այդ մասին:

5. Այլ պայմաններ

5.1. Խաղարկության մասնակցությունը (այդ թվում՝ սույն կանոնների 4.1. կետում նշված տվյալների ներկայացումը, հաղթելու դեպքում մրցանակը ստանալը և այլն) համարվում են մասնակցի կողմից սույն կանոնների անվերապահ ընդունում:

5.2. Սույն կանոնները, դրանցում հետագա փոփոխությունները (առկայության դեպքում) և խաղարկության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հրապարակվում են www.mts.am պաշտոնական կայքում:

5.3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թափանցիկության ապահովման նպատակով խաղարկության մասնակցության ընթացքում՝ մինչև մրցանակը ստանալու պահը, մասնակիցներին անհատականացնող տվյալներ (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ և այլն) չեն ֆիքսում Կազմակերպչի համակարգերում և շահող մասնակցի ընտրությունն իրականացվում է միայն պատահականության սկզբունքով վճարման անդորրագրի մեջ նշված աքսեսուարի սերիական համարն (Քարտի N) ընտրելով: Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն չի կրում աքսեսուարը փաստացի ձեռք բերած շահող և սույն կանոնների 4.4. կետում նշված կարգով Կազմակերպչի գլխամասային գրասենյակ ներկայացած անձանց միջև հնարավոր վեճերի համար: Բոլոր դեպքերում խաղարկության հաղթող է ճանաչվելու սույն կանոնների 4.4. կետում նշված կարգով Կազմակերպչի գլխամասային գրասենյակ ներկայացած անձը: